ԳԼՈՒԽ ԻԷ
ՀԱՄԱՌՈՏ ՀԱՅՏԱԲԱՐՈՒԹՅՈՒՆ

Այն ինչ գրեցինք սկսած Ջահան շահից մինչև շահ Սաֆին համառոտ տեղեկատվությամբ, ինչ գտանք հայտնեցինք: Այժմ կպատմենք Արարատյան աշխարհի դեպքերն ու պատահարները՝ սկսած շահ Սաֆի թագավորից մինչև շահ Հուսեյին թագավորը, Ամիրգունա խանից մինչև Ֆարզալի խանը, որոնք տիրեցին Երևանյան երկիրը: Նրանց ժամանակ կատարվածները գրի կառնեմ այստեղ՝ իմացնելով նրանց, որոնք մեզնից հետո կգան: Նաև եթե այլ երկրի մասին որևէ բան իմանանք, այն էլ գրի կառնենք, ինչ որ լսել, ինչ որ տեսել ենք, այն էլ կշարադրենք: Ուստի աղաչում եմ՝ մի պախարակեք, ինչ որ դուք գիտեք, դուք էլ գրեցեք, իմ սևագրությունը ընդունեք, շարադրեք ավելի գեղեցիկ կարգով, քանզի այս է իմ կարողությունը:

ԳԼՈՒԽ ԻԸ
ԱՄԻՐԳՈՒՆԱ ԽԱՆԻ ՄԱՍԻՆ

Երբ պարսից Շահ Աբաս թագավորը գրավեց Երևանը, այնտեղ իշխան նշանակեց Ամիրգունա խանին, որը քաջ, ամրասիրտ, արի մարդ էր, պատերազմներում անահ ու աներկյուղ, շինարար և սիրող քրիստոնեից: Սա Երևանը տիրելու ժամանակ, իսկույն ձեռնարկեց շինության և մարդաշատության: Նախ սկսեց կառուցել բերդը, ապա ապարանքներ, այգիներ, բուրաստաններ, պարտեզներ, հանեց առուներ, ավելացրեց ջրերը: Ջանազան տեղեր թեթևացրեց հարկերը և ռամիկների պարանոցներից վերացրեց ծանր լուծը, բայց շատացրեց զոռխրան՝ այսինքն կոռը, քանզի, ինչպես ասացինք, շինարարություն էր անում, այս պատճառով կոռը շատացրեց: Այդ էր պատճառը, որ առասպելաբանեցին, թե քանի որ կինը հղի լինելով նրա ամուսնուն կոռ էին տանում և չէին թողնում գնալ իր տունը: Եվ կինը ծննդաբերում էր որդի, սա մեծանում էր, սրան կոռ էին ուղարկում, որ հայրը տուն գնար: Այս առասպել-

ները շատ կոռի համար էին ասում: Թեպետ շատ էր կոռը, սակայն խանը հաց էր տալիս կոռի մշակներին, քանի որ գթասիրտ էր: Շատ հաց թխելով բարձում էր ձիերին, առնում գնում էր շրջում հանդերը և հացը բաժանում էր նրանց, որոնք հանդերում էին աշխատում: Այս պատճառով աշուղները գովաբանական երգեր ասացին առատաձեռն լինելու համար: Եվ այսպես մնալով շինարարություն էր կատարում երկրում:

Քանի դեռ կենդանի էր Ամիրգունան, շատ քաջություններ արեց օսմանցիների դեմ, քանզի երկու անգամ գնաց Կարնո գավառը, ավերեց ու երկիրը գերեց և հասավ մինչև Կարնո բերդի դուռը և լախտով զարկեց բերդի դռանը և գերիներին բերեց Երևանի երկիրը բնակեցրեց: Նաև գնաց Վանա, Մշո կողմերը և գերելով նրանց՝ գերիներին բերեց բնակեցրեց այն նահանգներում, որոնք Երևանի դաշտում են: Քանզի այն գյուղերը, որոնք Երևանի և Էջմիածնի շրջաններում են, այսինքն՝ Քալարան, Գոկումբեթը, Կավակերտը[82], Փարաքարը, Սապատը[83] և այլք, ում որ օսմանցիների գավառներից բերեց, բերեց բնակեցրեց այս գյուղերում, որոնք շեն են մինչև այժմ: Եվ այսպես ապրում էր նա քաջությամբ և ջանք էր գործադրում Արարատյան աշխարհի շենության համար, նաև սիրում էր հայ ազգը և մշտապես գնում էր քրիստոնյաների (հայերի) տները, ուտում և խմում էր նրանց հետ:

Եվ նշանակեց գավառապետներ, այսինքն՝ մելիքներ: Քանաքեռ գյուղից Դավիթ անունով մեկին նշանակեց Կոտայքի ու Աբերդի մելիք: Գյոզալ բեկ անունով կարբեցի մեկին նշանակեց Դավթին ընկեր ու խորհրդակից: Եվ խանը ինչ անում էր, հարցնում էր նրանց: Երբ ընթրիքի էր նստում, իր աջ ու ձախ կողմերում նստեցնում էր Դավիթ մելիքին և Գյոզալ բեկին և ասում էր՝ դուք իմ հայրն եք, իսկ ես ձեր որդին: Այս անում էր, որպեսզի հաճոյանար բոլորի աչքում, որ ջանք անեն երկրի շինարարության համար: Եվ այսպես խոհեմ իմաստությամբ վարեց իր կյանքը մինչև մահ: